1. Անհատ Ձեռնարկատեր <<Նորայր Արսենի Պետրոսյանի>>-ին /գործունեության հասցեն՝ Ծաղկաձոր համայնք, Սարալանջի փողոց, թիվ 56 / տրամադրել՝

1) 2023 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն՝ 353,2 քմ տարածքում,

2) 2023 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 353,2 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 409

*14 ապրիլ 2023թ.*

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով `

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ Ձեռներեց Գևորգ Մարտիրոսյանին /գործունեության հասցեն՝ Ծաղկաձոր համայնք, Չարենցի փողոց թիվ 40/ տրամադրել՝

1) 2023 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 24.5 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 410

*14 ապրիլ 2023թ.*

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ Ձեռնարկատեր <<Նորայր Արսենի Պետրոսյան>> -ին տրամադրել 2023 թվականի ապրիլի 01-ից մինչև 2023 թվականի հուլիսի 01-ը Ծաղկաձոր համայնք, Սարալանջի փողոց 56 հասցեում՝ 6.6 քմ ընդհանուր մակերեսով արտաքին գովազդ /Աղ ու հացով/տեղադրելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 411

*14 ապրիլ 2023թ.*

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.<<ԷԳԱ>>սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2023 թվականի ապրիլի 01-ից մինչև 2023 թվականի մայիսի 01-ը Ծաղկաձոր համայնք, Սարալանջ, Տանձաղբյուր, Խաչատուր Կեչառեցու փողոցներում ՝ 84 քմ ընդհանուր մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 412

*17 ապրիլ 2023թ.*

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ, ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<ԲԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը /գործունեության հասցեն՝ Ծաղկաձոր համայնք, Մ.Մկրտչյան փողոց, թիվ 54/ տրամադրել՝

1) 2023 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում հանրային սնունդ կազմակերպելու և իրացնելու թույլտվություն՝ 425 քմ տարածքում,

2) 2023 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքների վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 425 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 413

*17 ապրիլ 2023թ.*

## «ԳԼԱՎԴՈՐՍՏՐՈՅ» ԲԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծաղկաձորի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Գլավդորստրոյ» ԲԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 28.09.2022թ. կնքվել է թիվ «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/4 ծածկագրով կապալային աշխատանքների պայմանագիրը, որի արդյունքում Կապալառուի կողմից համայնքի մասնաբաժնի չափով /համայնքի մասնաբաժնի չափով ֆինանսավորումը եղել է առկա/ ներկայացվել է «Լորդ-Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված որակավորման և պայմանագրի ապահովման երաշխիքներ, իսկ պետական բյուջեի մասնաբաժնով՝ ապահովումներ՝ տուժանքի ձևով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը.

Ծաղկաձորի համայնքապետարանի և «Գլավդորստրոյ» ԲԸ-ի միջև 28.09.2022թ. կնքված «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/4» ծածկագրով պայմանագրի 8.3-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Ծաղկաձորի համայնքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի և պայմանագրի 8.3. կետի պահանջներով՝ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների նկատմամբ ուսումնասիրության և իրականացված հսկողության ընթացքում արձանագրել է, որ Կապալառուի կողմից ներկայացված պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման բանկային երաշխիքները չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմաններին, քանի որ «Լորդ-Ինվեստ» ՍՊԸ-ն չի հանդիսանում ոչ բանկ, ոչ էլ ապահովագրական ընկերություն, ինչն էլ ի հայտ է եկել ՀՀ ֆինանսների նախարարություն իրականացված հարցման և վերջինիս կողմից որպես լիազոր մարմին տրված պարզաբանման արդյունքում:

Միևնույն ժամանակ, ՀՀ Քաղաքաշինության կոմիտեին արված հարցումներից ստացված տեղեկատվության համաձայն՝ կապալային աշխատանքների իրականացման նպատակով «Գլավդորստրոյ» ԲԸ-ի կողմից ներկայացված լիցենզիաները նույնպես չեն բավարարում «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներին, և ՀՀ Քաղաքաշինության կոմիտեն հայտնել է, որ իր կողմից «Գլավդորստրոյ» ԲԸ-ին քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու թույլատվություն չի տրամադրվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի և «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/3-2» ծածկագրով պայմանագրի 8.3-րդ պահանջները՝ Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծել է թիվ «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/3-2» ծածկագրով պայմանագիրը:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ծաղկաձորի համայնքապետարանի և «Գլավդորստրոյ» ԲԸ-ի միջև 28.09.2022 թվականին կնքված «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/3-2» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակվել է www.gnumner.am համացանցային տեղեկագրում և միևնույն ժամանակ ուղարկվել մասնակցին 06.04.2023թ.-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի,գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք,որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝
ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,
Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերությամբ և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. «Գլավդորստրոյ» ԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 7729511888) երկու տարի ժամկետով ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման օրինակը ուղարկել «Գլավդորստրոյ» ԲԸ-ին և ՀՀ ֆինանսների նախարարությանը:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Ծաղկաձոր համայնքի ղեկավար Ն. Հարությունյանի վրա:

4. Ծաղկաձոր համայնքի ղեկավար Ն. Հարությունյանի «Գլավդորստրոյ» ԲԸ-ին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 17.04.2023թ. որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել «Գլավդորստրոյ» ԲԸ-ի կողմից՝ այն ստանալու պահից հաշված երեսուն օրացուցային օրվա ընթացքում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 414

*17 ապրիլ 2023թ.*

## «ԳԼԱՎԴՈՐՍՏՐՈՅ» ԲԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծաղկաձորի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Գլավդորստրոյ» ԲԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 28.09.2022թ. կնքվել է թիվ «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/3-2» ծածկագրով կապալային աշխատանքների պայմանագիրը, որի արդյունքում Կապալառուի կողմից համայնքի մասնաբաժնի չափով /համայնքի մասնաբաժնի չափով ֆինանսավորումը եղել է առկա/ ներկայացվել է «Լորդ-Ինվեստ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված որակավորման և պայմանագրի ապահովման երաշխիքներ, իսկ պետական բյուջեի մասնաբաժնով՝ ապահովումներ՝ տուժանքի ձևով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը.

Ծաղկաձորի համայնքապետարանի և «Գլավդորստրոյ» ԲԸ-ի միջև 28.09.2022թ. կնքված «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/3-2» ծածկագրով պայմանագրի 8.3-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Ծաղկաձորի համայնքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի և պայմանագրի 8.3. կետի պահանջներով՝ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների նկատմամբ ուսումնասիրության և իրականացված հսկողության ընթացքում արձանագրել է, որ Կապալառուի կողմից ներկայացված պայմանագրի կատարման ապահովման և որակավորման ապահովման բանկային երաշխիքները չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմաններին, քանի որ «Լորդ-Ինվեստ» ՍՊԸ-ն չի հանդիսանում ոչ բանկ, ոչ էլ ապահովագրական ընկերություն, ինչն էլ ի հայտ է եկել ՀՀ ֆինանսների նախարարություն իրականացված հարցման և վերջինիս կողմից որպես լիազոր մարմին տրված պարզաբանման արդյունքում:

Միևնույն ժամանակ, ՀՀ Քաղաքաշինության կոմիտեին արված հարցումներից ստացված տեղեկատվության համաձայն՝ կապալային աշխատանքների իրականացման նպատակով «Գլավդորստրոյ» ԲԸ-ի կողմից ներկայացված լիցենզիաները նույնպես չեն բավարարում «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի պահանջներին, և ՀՀ Քաղաքաշինության կոմիտեն հայտնել է, որ իր կողմից «Գլավդորստրոյ» ԲԸ-ին քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու թույլատվություն չի տրամադրվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի և «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/3-2» ծածկագրով պայմանագրի 8.3-րդ պահանջները՝ Պատվիրատուն միակողմանի մասնակի լուծել է թիվ «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/3-2» ծածկագրով պայմանագիրը:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառվել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ծաղկաձորի համայնքապետարանի և «Գլավդորստրոյ» ԲԸ-ի միջև 28.09.2022 թվականին կնքված «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-22/3-2» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակվել է www.gnumner.am համացանցային տեղեկագրում և միևնույն ժամանակ ուղարկվել մասնակցին 06.04.2023թ.-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի,գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք,որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝
ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,
Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) պարբերությամբ և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. «Գլավդորստրոյ» ԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 7729511888) երկու տարի ժամկետով ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման օրինակը ուղարկել «Գլավդորստրոյ» ԲԸ-ին և ՀՀ ֆինանսների նախարարությանը:

3. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Ծաղկաձոր համայնքի ղեկավար Ն. Հարությունյանի վրա:

4. Ծաղկաձոր համայնքի ղեկավար Ն. Հարությունյանի «Գլավդորստրոյ» ԲԸ-ին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 17.04.2023թ. որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել «Գլավդորստրոյ» ԲԸ-ի կողմից՝ այն ստանալու պահից հաշված երեսուն օրացուցային օրվա ընթացքում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 415

*18 ապրիլ 2023թ.*

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով , հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N205-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Աբրահամ Հարությունի Նարիմանյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 12112021-07-0050) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Խ.Կեչառեցու փողոց, թիվ 44 հասցեում գտնվող, 0.19 հա մակերեսով հողամասի բաժանման հետևանքով առաջացած (ըստ բաժանման հատակագծի բաժանվող հատված 2) 0.00984 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Խ.Կեչառեցու փողոց, 44/1 հողամաս, իսկ մնացած 0.18009 հա մակերեսով հողամասին (ըստ բաժանման հատակագծի բաժանվող հատված 1) հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Խ.Կեչառեցու փողոց, 44 հողամաս :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 416

*18 ապրիլ 2023թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N205-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ռիմա Ապետնակի Պետրոսյանին և Սաթո Ասատուրի Պետրոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 1528580 տրված 04 հուլիսի 2003թ.) 0,142 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Մեղրաձոր, 3-րդ փողոց, 5-րդ փակուղի, 7 հողամաս:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 417

*18 ապրիլ 2023թ.*

## ՄԱՐԶ ԿՈՏԱՅՔ, ՀԱՄԱՅՆՔ ԾԱՂԿԱՁՈՐ, ԳՅՈՒՂ ԱՐՏԱՎԱԶ, 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 9-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԻԿՈԼԱՅ ՎԱԼԵՐԻԻ ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N205-Ն որոշման հավելված 2-ը՝ և հիմք ընդունելով 10.04.2023թ. տրված ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Արտավազ բնակավայրի Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 19.04.1991թ. թիվ 12 որոշման քաղվածքը, ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Արտավազ բնակավայրի տնտեսության թիվ 1 գրքի քաղվածքը /գրանցում N 95/, 17.04.2023թ. տրված ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրով գույքի նկատմամբ ժառանգ Նիկոլայ Վալերիի Դալլաքյանը՝ ծնված 01.06.1975թ. դիմումը և<<ԳԵՈԼԵՆԴ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, որոնց համաձայն մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, գյուղ Արտավազ, 1-ին փողոց, 9-րդ փակուղի թիվ 2 հասցեում գտնվող հողամասը սեփականաշնորհվել է 0.18 հա, որը Նիկոլայ Վալերիի Դալլաքյանին՝ ծնված 01.06.1975թ. ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է, որը փաստացի կազմում է 0.21686 հա /ծածկագիր՝ 07-17-0015-0002/, և հաշվի առնելով այն, որ նրա վրա օրինական կառուցված անհատական բնակելի տունը և դրան կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները՝ 111.08 քմ ընդհանուր մակերեսով, կառուցված են 1976թ., այսինքն՝ մինչև 2001թվականի մայիսի 15-ը, որոնք որպես սեփական գույք տիրապետում է Նիկոլայ Վալերիի Դալլաքյանը, և որոնց կառուցման և

սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ՝

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նիկոլայ Վալերիի Դալլաքյանին ժառանգությամբ անցած (ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի 2023 թվականի ապրիլի 17-ին,ՀՀ, Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտար՝ Սեդա Ավետիքի Բաղդոյանի կողմից, գրանցված գրանցամատյանում N 1024, ժառանգական գործ N 105), 0,21686 հա /հատկացվել էր 0.18 հա/ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր ,գյուղ Արտավազ, 1-ին փողոց, 9-րդ փակուղի թիվ 2 :

2.Վերականգնել մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, գյուղ Արտավազ, 1-ին փողոց, 9-րդ փակուղի թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Նիկոլայ Վալերիի Դալլաքյանի՝ ծնված 01.06.1975թ., գույքային իրավունքը, այն է՝ ճանաչել Նիկոլայ Վալերիի Դալլաքյանի՝ ծնված 01.06.1975թ., սեփականության իրավունքը մինչև 2001 թվականի մայիսի 15-ը տիրապետվող և փաստացի առկա 0.21686 հա /հատկացվել էր 0.18 հա/ ընդհանուր մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման համար նախատեսված հողամասի /ծածկագիր՝ 07-017-0015-0002/ և դրա վրա մինչև 2001 թվականի մայիսի 15-ը օրինական կառուցված բնակելի նշանակության 111.08 քմ ընդհանուր մակերեսով շինությունների նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

3. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող <<ԳԵՈԼԵՆԴ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Ծաղկաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 418

*18 ապրիլ 2023թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N205-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Շիրինշա Սարիբեկի Գալստյանին,Վարսենիկ Գալստյանին,Ժենիկ Գալստյանին,Լուսինե Շիրինշիի Գալստյանին և Գայանե Շիրինշայի Գալստյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 06122022-07-0111) 0,2929 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Աղավնաձոր, 3-րդ փողոց, 1-ին փակուղի, 1 հողամաս:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 419

*18 ապրիլ 2023թ.*

**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի ԹԻՎ 248 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝**

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

**1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 15-ի <<Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին>> թիվ 248 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝**
**1) 2-րդ կետի <<Լեյլի Խաչատրյան>> բառերը փոխարինել <<Ռիմա Մանուկյան >> բառերով:**

**2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 420

*18 ապրիլ 2023թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N205-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Եղիշե Ազատի Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 2138861 տրված 09 մարտի 2006թ.) 0,1 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, գյուղ Արտավազ, գ. Փյունիկ 1-ին փողոց, 1-ին փակուղի, 3 հողամաս:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 421

*18 ապրիլ 2023թ.*

**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 116 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 18-ի <<Ծաղկաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների էթիկայի հանձնաժողով ստեղծելու և հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին>> թիվ 116 որոշման հավելված 1 -ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

421

Հավելված N 1
Ծաղկաձորի համայնքի ղեկավարի
2023թվականի հունվարի 18 -ի
N 116 որոշման
Փոփոխությունը 2023թվականի ապրիլի 18 -ի
N 421 որոշման

# ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

| Հ/Հ | Հանձնաժողովի կազմը | Անուն, ազգանունը | պաշտոնը |
|---|---|---|---|
| 1 | Հանձնաժողի նախագահ | Գարիկ Բադալյան | Աշխատակազմի քարտուղար |
| 2 | Հանձնաժողովի անդամ | Ռիմա Մանուկյան | Իրավաբանական, քարտուղարության,անձնակազմի կառավարման բաժնի պետ |
| 3 | Հանձնաժողովի անդամ | Մարգարիտ Ղազարյան | Իրավաբանական, քարտուղարության,անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետ՝ սոց աշխատող |
| 4 | Հանձնաժողովի անդամ | Նարինե Խաչատրյան | Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման,հավաքագրման բաժնի պետ |
| 5 | Հանձնաժողովի անդամ | Արա Մեսրոպյան | Քաղաքաշինության, ողաշինության,գյուղատնտեսության, բնապահպանության բաժնի պետ |
| 6 | Հանձնաժողովի անդամ | Արմեն Արշակյան | Զարգացման ծրագրերի,տուրիզմի,առևտրի,սպասարկման և գովազդի բաժնի պետ |
| | | | |

ՀԱՅԱUՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

## ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 422

*18 ապրիլ 2023թ.*

**ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 929 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 5-ի <<Ծաղկաձոր համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող հանձնաժողով ստեղծելու մասին>> թիվ 929 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված N 1
Ծաղկաձորի համայնքի ղեկավարի
2022թվականի հոկտեմբերի 05 -ի
N 929 որոշման
Փոփոխությունը 2023թվականի ապրիլի 18 -ի
N 422 որոշման

# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԸ

| Հ/Հ | Հանձնաժողովի կազմը | Անուն, ազգանուն | պաշտոն |
|---|---|---|---|
| 1 | Հանձնաժողի նախագահ | Ոսկան Եղիազարյան | Համայանքի ղեկավարի առաջին տեղակալ,ավագանու անդամ |
| 2 | Հանձնաժողովի անդամ | Արմենուհի Առաքելյան | ավագանու անդամ |
| 3 | Հանձնաժողովի անդամ | Արթուր Մելոյան | ավագանու անդամ |
| 4 | Հանձնաժողովի անդամ | Գարիկ Բադալյան | Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար |
| 5 | Հանձնաժողովի անդամ | Ռիմա Մանուկյան | Իրավաբանական, քարտուղարության,անձնակազմի կառավարման բաժնի պետ |
| 6 | Հանձնաժողովի անդամ | Նարինե Խաչատրյան | Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և և հավաքագրման բաժնի պետ |
| 7 | Հանձնաժողովի անդամ | Արփինե Ավետիսյան | Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ-գնումների համակարգող |
| 8 | Հանձնաժողի քարտուղար | Մարգարիտ Ղազարյան | Իրավաբանական, քարտուղարության,անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետ- սոց աշխատող |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 423

*18 ապրիլ 2023թ.*

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔ ԿԱՄ ԻՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով `

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անհատ Ձեռնարկատեր << Պետրոս Պետրոսյան>>-ին /գործունեության հասցեն՝ Ծաղկաձոր համայնք, Մարմարիկ 12/5 / տրամադրել՝

1) 2023 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառք կամ իրացում կազմակերպելու թույլտվություն՝ 50 քմ տարածքում,

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 424

*18 ապրիլ 2023թ.*

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, «Գովազդի մասին» օրենքի 11-րդ հոդվածով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե>>հասարակակն կազմակերպության <<Ծաղկաձորի ճոպանուղի>> մասնաճյուղին տրամադրել 2023 թվականի ապրիլի 01-ից հուլիսի 01-ը ժամանակահատվածում Ծաղկաձոր համայնք, Տանձաղբյուրի փողոց 25 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ իր կազմակերպության արտաքին գովազդ՝ 200 քմ, այլ արտաքին գովազդ ՝ 350 քմ ընդհանուր մակերեսներով ։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 425

*19 ապրիլ 2023թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով , հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N205-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ավագ Գագիկի Շիրինյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 30112022-07-0223) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Սարալանջի փողոց, 4-րդ փակուղի, 12 հասցեում գտնվող, 0.20461 հա մակերեսով հողամասի բաժանման հետևանքով առաջացած (ըստ բաժանման հատակագծի բաժանվող հատված 1) 0.05 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Սարալանջի փողոց, 4-րդ փակուղի, 12/7 հողամաս, (ըստ բաժանման հատակագծի բաժանվող հատված 2) 0.05 հա մակերեսով հողամասին հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Սարալանջի փողոց, 4-րդ փակուղի, 12/6 հողամաս , (ըստ բաժանման հատակագծի բաժանվող հատված 3) 0,05 հա մակերեսով հողամասին հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր Սարալանջի փողոց, 4-րդ փակուղի, 12/5 հողամաս , (ըստ բաժանման հատակագծի բաժանվող հատված 4) 0.0392 հա մակերեսով հողամասին հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր Սարալանջի փողոց, 4-րդ փակուղի, 12/4 հողամաս, իսկ մնացած 0.0154 հա մակերեսով հողամասին (ըստ բաժանման հատակագծի բաժանվող հատված 5) հասցեն տողնել նույնը՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր Սարալանջի փողոց, 4-րդ փակուղի, 12 հողամաս:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ TSAGHKADZOR MUNICIPALITY 03027029

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 426

*19 ապրիլ 2023թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով , հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N205-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Գարուն Ալիկի Միրզոյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 04042023-07-0155) մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, 16 հասցեում գտնվող, 0.15 հա մակերեսով հողամասի բաժանման հետևանքով առաջացած (ըստ բաժանման հատակագծի բաժանվող հատված 2) 0.033778 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, 16/5 հողամաս , իսկ մնացած 0.116222 հա մակերեսով հողամասին (ըստ բաժանման հատակագծի բաժանվող հատված 1) հասցեն՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, 16 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 427

*19 ապրիլ 2023թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N205-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Մարի Ալֆրեդի Շաբոյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 2519692 տրված 11 դեկտեմբերի 2007թ.) 0,08 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր,գյուղ Արտավազ, 1-ին փողոց, 1-ին նրբանցքի 2-րդ փակուղի, 14 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 428

*19 ապրիլ 2023թ.*

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Կարեն Ավդալյանի դիմումը`

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կարեն Աշոտի Ավդալյանին տրամադրել համայնք Ծաղկաձոր, գյուղ Մարմարիկ ,6-րդ փողոց, 2-րդ նրբանցք թիվ 6 հասցեում բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն:
2. Համայնքապետարանի քաղաքաշինության գլխավոր մասնագետին ապահովել աշխատանքների սկսման համար, գործող կարգին համապատասխան անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը և պատշաճ հսկողության իրականացումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 429

*19 ապրիլ 2023թ.*

### ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N205-Ն որոշման հավելված 2-ը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ալիսա Հայրապետի Հովսեփյանին,Լիդա Ներսեսի Ղազարյանին,Լուսինե Ներսեսի Ղազարյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 07032023-07-0200) 74.01 քմ մակերեսով բնակարանին և Ավետիք Արայիկի Ղազարյանին ժառանգությամբ անցած (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 2023 թվականի մարտի 24-ին,ՀՀ, Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտար՝ Աշոտ Հովհաննեսի Գինոսյանի կողմից, գրանցված գրանցամատյանում N 1128, ժառանգական գործ N 81), 74.01 մակերեսով բնակարանի 1/5 /մեկ հինգերորդ/ բաժնին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր Խ. Կեչառեցու փողոց, 8 շենք, 3 բնակարան:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
КОТАЙКСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ЦАХКАДЗОР
KOTAYK REGION TSAGHKADZOR MUNICIPALITY
RA
03027029

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 430

*19 ապրիլ 2023թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N205-Ն որոշման հավելված 2-ը՝

# ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ավետիք Արայիկի Ղազարյանին ժառանգությամբ անցած (ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի 2023 թվականի մարտի 24-ին,ՀՀ, Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտար՝ Աշոտ Հովհաննեսի Գինոսյանի կողմից, գրանցված գրանցամատյանում N 1128, ժառանգական գործ N 81), 0,06 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ մարզ Կոտայք, համայնք Ծաղկաձոր ,Նոր թաղամասի 4-րդ փողոց, 16 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ**
# ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 431

*19 ապրիլ 2023թ.*

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>>օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 205-Ն որոշման հավելված 2-ի պահանջները և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ղեկավարի կողմից 2023 թվականի ապրիլի 05-ի թիվ 02 քանդման թույլտվությունը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կառուցապատող <<ԱՎԷԱ>> ՍՊԸ-ին /հաշվառման վայրը՝ Ծաղկաձոր, Գրիգոր Մագիստրոսի փողոց 13 շենք 12 բնակարան/տրամադրել քաղաք Ծաղկաձոր,Վլադիմիր Հարությունյան փողոց թիվ 6 հասցեում գտնվող հողամասի վրա առկա շինությունների քանդման արդյունքում առաջացած 305 խմ շինարարական աղբի տեղափոխման թույլտվություն՝ սահմանված տեղական վճարի դիմաց:

2. Տեղական վճարը վճարել 900125002338 հաշվեհամարին համայնքի ավագանու կողմից սահմանված դրույքաչափով, որը կազմում է 183 000 դրամ :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**